Պաշտոնական ընդդիմախոսի
կարծիք

Էրիկ Գևորգի Վարդանյանի «Կայուն ճարտարապետության խնդիրները ՀՀ ժամանակակից հասարակական շենքերի ճարտարապետության մեջ» ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԸ. 00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գաղտնիք չէ, որ քաղաքակրթությունների զարգացումը հանգեցրել է բնական միջավայրի խաթարումների և մարդկության համար առաջացրել բազմաթիվ էկոլոգիական խնդիրներ: Բնության և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերին է անդրադառնում կայուն ճարտարապետությունը, որը նպատակ ունի շենքերի բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնել: Ատենախոսության մեջ այս հրատապ թեման է շոշափում Էրիկ Վարդանյանը: Սա նորույթ է մեր գիտական իրականության համար, մանավանդ որ ատենախոսը քննարկումներում անդրադարձել է հասարակական շենքերին, քանի որ կայուն ճարտարապետության ուսումնասիրություններում շատ են անդրադարձները բնակելի կառույցներին, մինչդեռ հասարակական շենքերը և դրանց ճարտարապետությունը ունեն զգալի մեծ նշանակություն կայունության բոլոր բաղադրիչների վրա: Էրիկ Վարդանյանը հիմնվելով այս ասպարեզում միջազգային փորձի վրա, ներկայացնել է ՀՀ-ում կայուն ճարտարապետությամբ հասարակական շենքերի իրականացման փորձի ամբողջական պատկերը:

Ատենախոսությունը շարադրված է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխան՝ գիտահետազոտությանը հարիր տրամաբանական հաջորդականությամբ: Աշխատանքն ունի ներածություն, երեք գլուխներ, ընդհանուր եզրակացություններ, գրականության ցանկ և գծագրեր, սխեմաներ, լուսանկարներ, գծագրեր, աղյուսակներ պարունակող հավելված:

Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության առարկան և սահմանները, մեթոդաբանությունը, նորույթն ու գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը, որ վերնագրված է «Կայուն ճարտարապետության զարգացումը և արդի դրսևորումները», ներկայացված է կայուն ճարտարապետության զարգացման համապարփակ պատկերը՝ մարդկության պատմության զարգացման համատեքստում: Սկսելով քարե դարից և հասնելով մինչև պոստմոդեռնիզմի դարաշրջան, ատենախոսը քննարկում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի սոցիալական, տնտեսական, աշխարհընկալման համակարգի և մարդկանց կենսակերպի փոփոխությունները, որոնք թելադրում են որոշակի պահանջմունքներ և բնապահպանական, սոցիալական, մշակութային խնդիրներ առաջադրում, որոնց լուծմանն էլ միտված է կայուն ճարտարապետությունը:

Ժամանակի ընթացքում տարրական կարիքների բավարարումից անցնելով առավել հարմարավետ միջավայրի ստեղծմանը, մարդկությունը մշտապես հարմարեցրել է շրջակա միջավայրը՝ փոփոխելով և խաթարելով դրա բնական վիճակը: Խաթարման արդյունքում միջավայրի վրա բացասական ազդեցությունը մեծանալով ու անդրադառնալով մարդկանց կյանքի որակական հատկանիշների վատթարացմանը՝ ստիպել է վերանայել շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքը: Ատենախոսության այս հատվածում հեղինակն անդրադառնում է մոդեռնիզմի դարաշրջանի աշխարհահռչակ անունների՝ Ֆրենկ Լոյդ Ռայթ, Լե Կորբուզիե, Ալվարո Ալտո, Ֆիլիպ Ջոնսոն, Հասսան Ֆաթին և այլք, ովքեր միջավայրակայուն ճարտարապետության զարգացման մեջ իրենց ներդրումն են ունեցել: Պոստմոդեռնի դարաշրջանում կայուն ճարտարապետությունը, ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը, կանգնած է նոր մարտահրավերների առաջ նյութերի, տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության և գործառույթային օգտագործման, ձևերի և չափերի, թափանցիկության և զանգվածայնության հարցեր, որոնք պետք է ուսումնասիրվեն առավել արդյունավետ և կայուն լինելու համար: Միջազգային հանրությունը անդրադառնալով այս մարտահրավերներին ձեռնարկել է տարբեր գործողություններ՝ նվազեցնելու բացասական ազդեցությունը մոլորակի վրա և բարելավելու մարդկանց կյանքի որակը: Աշխատանքում շատ մանրամասն ներկայացված են դրանք՝ միջազգային համաձայնագրեր, համաժողովներ, շենքերի գնահատման համակարգեր (BREEAM-ը Մեծ Բրիտանիայում, LEED-ը ԱՄՆ-ում, Green Star-ը Ավստրալիայում, HQE-ն Ֆրանսիայում և այլն): Բավական ծավալուն ամփոփված է նաև կայուն ճարտարապետության

համաշխարհային փորձը: Շրջանառության մեջ է դրված ոլորտի համար կարևոր և ընդգրկուն նյութ, որը բացի այն, որ օգնում է ատենախոսին իրագործել իր առջև դրված նպատակը և լուծել խնդիրները, այլև այլ հետազոտությունների համար հեռանկարներ է բացում: Այսուհանդերձ, գտնում ենք, որ գլուխը երկարաշունչ է և կարող էր ավելի համառոտ շարադրանք ունենալ: Մեր կարծիքով տարբեր երկրների առանձին-առանձին և շատ մանրամասն ներկայացված փորձը (ԱՄՆ, Նիդերլանդներ, Ֆրանսիա, Բրազիլիա, Սինգապուր, Ռուսաստան և այլն) նկարագրելու փոխարեն, պետք էր դաշտում գոյություն ունեցող ընդհանուր մոտեցումները ամփոփել՝ հղելով կոնկրետ երկիրը:

Երկրորդ գլխում քննարկվում են գոյություն ունեցող շենքերի կայուն վերափոխումների հնարավորությունները: Վերլուծությունն իրականացված է տեղական և միջազգային օրինակներով և ըստ կայունության հիմնական բաղադրիչների՝ սոցիալական, տնտեսական, միջավայրային և ինստիտուցիոնալ: Այստեղ ատենախոսն անդրադառնում է հետպատերազմյան տարիներին լայնորեն տարածում ստացած ֆասադիզմի ուղղությանը և արդյունաբերական ու արտադրական շենքերի վերափոխումներին: Գլխի առաջին ենթագլխում ևս ծավալուն նյութ է հավաքված, որը հնարավորություն է ընձեռել հեղինակին երկրորդ ենթագլխում միջազգային փորձը տեղայնացնել հայկական օրինակներում: Որպես լավ օրինակ ներկայացված է բրիտանական BREEAM համակարգի հավաստագիրն ստացած և կայունության բոլոր բաղադրիչներին համապատասխանող «Կամար»՝ վերափոխված կառույցը: Սրա հետ ներկայացված են ևս՝ հավաստագիր չունեցող, բայց կայունության սկզբունքների հետ առնչվող 8 հասարակական շենքերի վերափոխման օրինակներ: Գլխի վերջին ենթագլխում ներկայացված են տարբեր երկրների 4 հասարակական շենքերի վերափոխման նախագծեր: Այստեղ, կուզենայինք նշել, որ այլ երկրների օրինակների մանրամասն և հայկականների նման հավասարազոր ներկայացումը տեղին չենք համարում: Դրանք պետք է ներկայացվեին համեմատությունների մեջ: Առավել ևս Էրիկ Վարդանյանն ինքն էլ է նկատում, որ վերափոխումները ոճային առումով երկու դեպքում էլ ունեն ընդհանրություններ:

Երրորդ գլխում իր որդեգրած մոտեցումներն ու մեթոդը աստենախոսը կիրառում է նոր հասարակական շենքերի միջազգային և տեղական-հայկական օրինակներում: Կայուն ճարտարապետության սկզբունքներով նոր հասարակական շենքերի

իրականացման փորձի հիման վրա դուրս են բերվել ոլորտում առկա խոչընդոտներն ու խնդիրները և արվել առաջարկություններ դաշտը կանոնակարգելու համար: Այս գլխում վերլուծվել են միջազգային չորս («Օասիա» կենտրոնը Սինգապուրի Տանյոնգ Պագար թաղամասում, Նյու Յորքի պրեբիստերյան «Դեյվիդ Հ. Քոք» բժշկական կենտրոնը, Քինգ Օփն դպրոցի և համայնքային կենտրոնի համալիրը, Դելուա Նիդեռլանդների գրասենյակային շենքը Ամստերդամի Ցուիդաս թաղամասում) և հայկական երեք՝ LEED-ի և BREEAM-ի կողմից հավաստագիր ստացած («Միացյալ քոլեջների ցանց-Դիլիջան» միջազգային դպրոց, «Խորեն և Շուշանիկ Ավետիսյաններ» դպրոց Երևանի հարավարևմտյան թաղամասում) օրինակներ:

Նոր նախագծվող հասարակական շենքերը ունեն կարևոր առաքելություն՝ ստեղծել նոր միջավայր, որը կապահովի կայունության բոլոր և շահառուների պահանջները: Սրանք իրենց հերթին պահանջում են ինչպես նախագծային, այնպես էլ նախագծերի ղեկավարման նորարար լուծումներ, նոր գործիքակազմեր: Այս տեսակետից, ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը, BIM-ը (Շինությունների տեղեկատվական մոդելավորում) արմատական մոտեցում բերեց՝ նախագծի տեսողական կերպարին ավելացնելով նաև դրա համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը:

Այս կապակցությամբ ատենախոսին կուզենայինք տեղեկացնել, որ մեր ղեկավարությամբ և Գիտության պետական կոմիտեի թեմատիկ ֆինանսավորմամբ 2018-2020թթ. ՃՇՀԱՀ կատարվեց «Ճարտարապետաշինարարական նախագծային ավտոմատացված աշխատանքային տեղի մշակում» թեման, որտեղ քննարկվեցին կայուն ճարտարապետության շատ հարցեր և մշակվեցին որոշ մոտեցումներ: Թեման ամփոփվեց մի շարք հրապարակումներով, որոնց անդրադարձը ատենախոսության գրականության ցանկում չենք տեսնում:

Պետք է ասել, որ ատենախոսությունն ունի գործնական ներդրում. վերլուծությունների արդյունքները հեղինակը համադրել է իր ղեկավարությամբ Երևան քաղաքում նոր կայուն հասարակական նշանակության շենքի նախագծման և իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրների հետ:

Ատենախոսության վերջում եզրակացություններում ամփոփվել են հետազոտության հիմնական դրույթները, որոնք պարունակում են առաջադրված խնդիրների լուծումները: Ատենախոսության մեջ ներկայացված՝ կայուն ճարտարապետության զարգացման

միջազգային հարուստ փորձի ուսումնասիրությունը ատենախոսին հնարավորություն է տվել անել առաջարկներ Հայաստանում հասարակական շենքերի կայուն ճարտարապետության զարգացման համար:

Աշխատանքն ունի նաև գիտահետազոտության տրամաբանությանը ենթարկված հավելված, որտեղ ի հավաստումն տեքստի, ներկայացված են հարուստ վիճակագրական և դիտակտիկ նյութեր, լուսանկարներ, շենքերի նախագծեր:

Ավարտելով պետք է ասեմ, որ ներկայացված դիտողություններն ու նկատառումները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը և ուղղվող կարգի են: Միայն այն, որ Էրիկ Վարդանյանը հավաքել, վերլուծել և շրջանառության մեջ է դնում թեմայի հետ առնչվող հարուստ նյութ, ինքնին գնահատելի է:

Հաշվի առնելով աշխատության կարևոր վերջնարդյունքներն ու նորույթը, բարձրացրած հարցերի հրատապությունը գտնում եմ, որ ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտություն է, լիովին համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած աստիճանին, որի համար հորդորում եմ ՃՇՀԱՀ-ին կից գործող ՀՀ ԲՈԿ-ի 029 «Ճարտարապետություն» մասնագիտական խորհրդին նրան շնորհել այդ՝ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
ճարտ. դոկ., պրոֆ.՝ Լ.Վ.Կիրակոսյան
10. 12. 2021թ.

ՄՈԿ ԲԱԺԻՆ
ОТДЕЛ УКР
HUMAN RMD

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն»
մասնագիտության մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
ճարտարապետության դոկտոր Ս.Ա. Թովմասյան